

# Ե Զ Ն Ի Կ Ի Ե Ղ Ծ Ա Ղ Ա Ն Դ Ո Յ Ի

ԲՆԱԳՐԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՆՆՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն տես Բազմավէպ 1929, էջ 201)

| էջ. տող.  | ՋՄԻՒՐՆ. ՏՊ.                                                           | ԲԳՐՏ. ՏՊ. — ԳԵՈՐԳԵԱՆ ՍՐԲ. | ԱՃ. — ՏԵՐ ՄԿՐՏԶ. ԶԵՌԱԳԻՐ                                                                 |
|-----------|-----------------------------------------------------------------------|---------------------------|------------------------------------------------------------------------------------------|
|           | ձԱՌ ԿԳ.                                                               | էջ. տող.                  |                                                                                          |
|           | Եղծանէ և զենքուածան առա-<br>յիկեանց                                   | (իՔ)                      | (իՔ)                                                                                     |
| 208 11-12 | աղանդամիտց կարծին ի                                                   | 227 13-14                 | աղանդամիտց զիտեն ի աղանդամիտցիտեն ի փխտոփայց                                             |
| 16        | զլաբախայս փխտոփայց                                                    | 20                        | զլաբախայս փխտոփայց                                                                       |
| 209 1     | զամենայն էս միտցն նկատել                                              | 224 1                     | զամենայն էս միտցն նկատել (ճոյճ ընդ Վ.)                                                   |
| 8-9       | յայտնի կարեն առնել                                                    | 11                        | յայտնի կարեն առնել                                                                       |
| 10        | ամենեքեան առաւպելս ար-<br>կանեն                                       | 13-14                     | ամենեքեան առաւպելս արկանեն                                                               |
|           | ձԱՌ ԿԳ.                                                               |                           |                                                                                          |
|           | Յաղագս եղծման եպիկուրեանց<br>աղանդոց                                  | (իՔ)                      | (իՔ)                                                                                     |
| 210 7-8   | Ջրոց և փխտոփայցն ըզ-<br>միտան եպիկուրեան և ամենեքեան<br>զնոցա զու ինչ | 229 2-4                   | Ջրոց և փխտոփայցն ինչ (ճոյճ ընդ Վ.)<br>ընելաց քերեն և ամենեքեան<br>չհամարին զնոցա աղանդոց |

228, 13-14. — «Զի ամենեքին առաւպելս արկանեն». Հ. Գ. Վ. Նահապետեան կ'առա-  
ջարկէ՝ առաւպելս կարկատեն. յայտնի է որ իմաստը քիչ մ'աւելի կը յստակուի, սակայն ոչ  
մէկ բնագրական նեցուկ ունինք կամ փաստ այդ սրբագրութիւնն ընելու:

229, 2-4. — Հոս Զմ. տպ. — «Զնախ քերեն» ընտիր ոճը թարգմանելով «զմիտսն եպիկուրեան»,  
բնագիրն աղճատած է, ինչպէս ստորեւ ալ (231, 12):

230, 23. — «Հնչմակապատան». Սճառեան յապտուրակի «ուղիղ է, կ'ըսէ, ուրիշներու կողմէ  
առաջարկուած հնչմակապաշտ ձևը, որ կը նշանակէ բուն ստանալապաշտ»:

Բայց շատ զարմանալի է որ Աճ. մեզ չի յայտնեց այդ ուրիշներուն անունը, չեմ գիտեր ինչ  
նպատակով:

Այսպիսին յայտնի է որ Հայկ. Բառ<sup>3</sup>. արդէն մտէն քննածո՛ւ այդ բառը՝ ըստ բաւականի  
գոնացուցիչ միակնութիւն մը տալով անոր. «Հնչմակապատ... (ի բառիցս էլմակի, որ է ըստ վր(աց)  
դե, սառանայ. և ըպտուէր, որ է ար(աբերէն) պատիւ. և կամ զրելի՝ Հնչմակապաշտ», ինչպէս  
որ Աճ. ալ յետոյ կ'ընդունի ըսելով թէ «իբր հակառակը քիչ մը վերը դրուած աւտուածապաշտ  
ձևին»:

Այս վերջին ձևն է որ մեր վերջին տպ. մէջ որդեգրուած է. (251. 3):

232, 4. — «Եկն աշխարհ», ուղղելի «Եկն յաշխարհ», ինչպէս յայտնի է տպ. սխալ է, և  
զմբխտաբար չէ անդրադարձուած վերջ. տպ. մէջ ալ: Բայց ի քերականական պահանջէն՝ որուն  
համեմատ սրբագրեր են փաթեղեան<sup>4</sup> և Կ. Պոլսեան<sup>5</sup> օրինակները, նոյնը կը հաստատեն Աճ. Զ.  
և Զմ. տպ. ը զոր անփոփոխ թողած են Գեորգ-Բըրտ:

234, 26. «Անխարխար պահելոյ». Բաբգէն Ա. «Թէ և անխարխար, կ'ըսէ, անծանօթ չէ հին  
հայերէնի... բայց կարծենք թէ ուղղելի է անխախտալ պահելոյ», և իբր համեմատական կամ  
զուգընթաց եզր կը մատնանչէ ընթերցողին «անխախտալ պահէ զեալսն» (էջ 7): Սակայն ոչ Աճ.

1. Քնն. և հմտ. են էջ 94. — 2. Հատ. Բ. էջ 85. — 3. Քնն. են. անդ. — 4. 1860, էջ 214. — 5.  
1864 և 1873 էջ 214. — 6. Հանգէս ԱՄՍ. 1907, էջ 314.

էջ 100դ.

10-13 Որոց այնքան կամակոր  
յամառութիւն եղև՝ մինչև  
յայնչափ

էջ 100դ.

6-8 Որոց այնքան կամակոր յա-  
մառութիւն եղև, մինչև  
յայնչափ

որոց այնքան աւրի եղև յայնչափ  
(տպագրութեամբ որոց այնքան կամակոր  
յամառութիւն եղև, մինչև յայնչափ.  
ձեռագրութեամբ յիշ կամակոր յամառու-  
թիւն մինչև)

ձԱՌ ԿԵՆ.

Պատճառ յամելոյ մարդանաւ.

լոյն Քրիստոսի

212 3-6 Այլ ասեն ընդէ՛ր... պա-  
տասխանեմ

230 23 յիշ պատասխանեմ

յիշ պատասխանեմ

14 յորժամ հեղեալ զեղոյր

231 12 յորժամ եւեւալ զեղոյր

(ճոյճ ընդ վ.)

218 6-7 զտղայութեանն ի բայ իսա-

232 2 զտղայութեանն իսպախանեցի

(ճոյճ ընդ վ.)

փանեցի

10 եկն յայնչափ զկատարեալն

4 եկն (յ)այնչափ ի կատարեալ

եկն յայնչափ ի կատարեալ զհոռու

տալ զգիտութիւն

գիտութիւն

Քիւնն

214 13 և եղ զնոսա ընդ ձեռամբ

233 17 և ետ զնոսա ընդ ձեռամբ

(ճոյճ ընդ վ.)

15 մի՛ անմինն անուել խորհիցէ

20 մի՛ անմինն անուել խորհիցէ

... խորհիցէ

215 6 զգործն արդեամբը... կան-

234 13 զգործն արդեամբը... կանխա-

(ճոյճ ընդ վ.)

խազկապալս

գէտ

անխաբխար

17 անխաբխար

236 անխաբխար

անխաբխար

2. և ոչ Գէորգ-Բգրտ. սրբագրութիւնը կը վաւերացնեն այդ փոփոխութիւնը: Ուստի, ըստ իս, անհաղիկ է այդ առաջարկը քանի որ ոչ լեզուական և ոչ բնագրի պահանջ մը կայ հակառակ եղածին. թողուիք որ խաբխարը շատ լաւ կը բացատրէ հոս խօսքին իմաստը:

238, 10. — «Եւ գպկտաւ աշխարհիս վասն մարդոյ արար ի սպասարութիւն»: Մարիէս կ'ըսէ թէ «զպկտաւ աշխարհիս n'a pas de sens, pas plus que l'allemand «die Bedürfnisse der Welt» de Schmid, p. 170, l. 718. Je crois que d'après le grec: τοῦτο λοιπόν τοῦ κόσμου σὺς αὐτῶν, il faut lire գպկտաւ աշխարհիս «l'autre moitié, le reste de ce monde»»:

Որքան որ շնորհաւորելի է Մարիէսի սրամտութիւնը, բայց ոչ նոյնքան յաջողութիւնը, քանի որ այդ քայլն ընելու ոչ մէկ հեղինակութիւն կայ. Աճ. — Գէորգ-Բգրտ-Ձմ. անխորի, առանց բացատրեան «պէտս» կը դնեն:

241, 5. — «Պրատնն թէ Մարկիոնն»: Հոս տարակոյս հանողը Մարիէս է դարձեալ. ան կարգ մ'ենթադրութիւններով՝ համարելով որ թոյլ կու տայ բնագիրը՝ կը կարծէ որ սկզբնական ձևին մէջ Մարկիոնն՝ եղած ըլլայ բնագիրը, յետոյ Պրատննի փոխուած. վասն զի անհնար է, կ'ըսէ Մարիէս, որ Եղնիկ նախ գրէ Պրատննի համար (241,5) «qu'il a parlé de Dieu, des âmes et des créatures» — (Պրատնն) որ վասն Աստուծոյ և վասն ոգոց և արարածոց խօսել յօժարեալ, և յետոյ նոյն էջին մէջ ըսէ հակասական ճոյճ (241, 23-24) «il dirait en bas de la même page que Platon a enseigné que Dieu n'avait pas de créatures» — (համարի Պրատնն) թէ միշտ էր Աստուած և արարածս ինչ ոչ ունէր»:

Ըստ իս, Մարիէս առերևոյթ հակասութենէ մը խուսել ուզելով՝ մեծագոյն դժուարութիւնաց կը բախի այդ փոփոխութեան առաջարկով: Նախ կարելի չէ ժխտել որ հոն խօսքը հեթանոս հին Յայեերու մասին է, ինչպէս (240,9) «Եւ արդ ի զուր ջանան իմաստունքն Յունաց զԱստուծոյ հասել... որպէս Եսէիդոս, և Հովնոս» որոնց կրնայ շատ լաւ յաջորդել Պրատնն, բայց ոչ բնաւ Մարկիոնն, քանի որ անով ահագին ոստում մը հարկ պիտի ըլլար անցնելով երեւելի դէմքերէ, ինչպէս նոյն ինքն Պրատնն, Արիստոտէլ և որ ըստ կարգի, մինչև որ քրիստոնէութեան Բ. դարն հասնէր և հոն ալ պիտի կարենար, եթէ ոչ Մարկիոննէն ցայտուն, բայց գէթ մերձաւոր գնահատի. կեաններու պարագլուխներու հանդիպել անոնց պոչ կարճող ամբաւ նախիրներու հետ:

Փանի մը տող վերջ բացարարութիւնն ունինք «ընդ նմա իսկ մարտիրոս... որ քան զամե- նայն փիլիսոփայոսն աստուածապաշտազոյն երկի Յունաց». և Պրատնն էր այդ աստուածապաշտը որուն կրնան փայլել նաև Ս. Հարթ՝ քրիստոնէական նախին ոչ ամառոտ շրջաններու մէջ:

Միւս կողմէն յայտնի է որ Աստուած միշտ էր և արարած չունէր, բայց ասոր հակառակ

էջ սող.

էջ տող.

ձևով. ԿԶ.

Թէ հիւն ոչ է նիւթ աշխարհի,  
և վասն է՛ր արար զաշխարհս.  
և զայն ազատ կամօք.

(շխ)

(շխ)

216 14 արհեստ

235 21 Խորամանկ

խորամանկ

218 19 յօժարեաց, Վասն վարարած

238 7 յօժարեաց արարածս

(նոյն ընդ Վ.)

21 զպէս աշխարհիս

10 զպէս աշխարհիս

(նոյն ընդ Վ.)

219 5 Ի կաման և Ի խորհուրդսն

20 կամօք և նիւթ և խորհուրդս

(նոյն ընդ Վ.)

ձևով. ԿԶ.

Յազազս զանազան հերժուս,  
ծոյց կռապաշտ փրկստփա,  
յից, և Մարկիոնայ ամբա,  
ըլլաք որ երեց աստուած  
աստուածաբան է Թէ Թե,  
սու է որդի օտար աստու,  
ծոյն, որ աստուծոյ Ի փրկել  
զտանջեալ արարածս օրիւ,  
նազն Աստուծոյ.

(շխ)

(շխ)

222 12 մեծարդոյ կարծիսն զձեռն

241 16 մեծարդոյ կարծիսն զձեռնսցուց մեծարդոյ կարծիսն զձեռնսցուց

չէ Թէ, յետոյ ունեցած ըլլայ, կամ վերջապէս Պղատոն՝ հետի անմիտ սկեպտիկ մ'ըլլալէ, կրնար ձառնի իրերուն վրան ալ որ կ'սն՝ առանց առ այժմ մտահոգուելու անոնց ծագումի հարցով:

Մարկիոնի անձին և վարդապետութեան ընդարձակ և մանրամասն ճառք քիչ վերջ է որ Եզ- նիկ կը ցուցադրէ (243), ուր, Բագրատունիին ալ հարկ զգացեր է նիւթի նորութեան համար նոր և յատուկ գիրք մը սկսիլ, ուստի կը ղնէ յոտակօրէն «Պիրք Գ. Եղծ պահադոյն Մարկիոնի»:

Ինդիր յարուցումն է հոն զարձեալ բացատրութեան մը ընթերցումին և հասկացողութեան շուրջ (241, 4-6) «Որ քան զամենեւին իմաստնագոյն համարին զՊղատոն, որ վասն Աստու- ծոյ» են:

Գալեմքեար-Շմիտ «derjenige, welcher für den weisesten von allen gehalten wird, Plato, welcher...» այս թարգմանութեան մէջ ինչպէս կը տեսնուի՞ Պղատոն ուղղ. տէր բայի դարձած է ինչպէս կը դիտէ Մարիէս և իրաւամբ ալ զայն սխալ կը համարի:

Սակայն Մարիէս ալ իր կարգին իր վրիպակն ունի. ան կը համարի որ խօսքն ըլլայ. «Et surtout celui-là qu'on estime plus pieux que tous, (plus pieux) que Platon, lequel (Platon)». Ըստ իրեն ուրեմն celui-là որ կը բաղադրուի Պղատոնի հետ և հաս n'est pas nommé Մարկիոնն է<sup>3</sup>: Մարիէսի սխալն հոն է որ մինչ ինքը Գալեմքեար-Շմիտը կը մեղադրէ զՇնչել- նուն համար՝ ինքն ալ զայն չ'ընդունիր իբրև համարի ներգ. բային սեռի խնդիր հայց. այլ պարզապէս քան հոլովառուն պահանջով: Սակայն ըստ իս, առանց բռնազբոսումի, պարզ և մեկին կը թուի իմաստը. «Որ քան զամենեւին իմաստնագոյն համարին զՊղատոն» = Անոնք որ (տէր բայի) ամէնէն աւելի իմաստուն կը համարին (ներգ. բայ) Պղատոնը (սեռի խնդ. հայց.):

Արդե՞ք ալ այս վերջին ընթերցման և մեկնութեան կը յանգի, միայն հզակի ձևով. «Հետեւեալ, կ'ըսէ, համարին պէտք կապալ որ համարէ-ն»<sup>4</sup>: Չեմ գիտեր ինչո՞ւ այս խղճահարութիւնն որմէ բնական է վրիպանք մ'առաջ կու գայ. համարիքը = Թէ՛ որ համարի և Թէ՛ = ճշտաւ որ համարին. ասոր կասկած չկայ, և ոչ որի մասին քանի որ նոյն ձևը յոգնակի իմաստով ալ կը գործածուի սո- վորաբար և անխտիր:

Վրիպանք ըսինք, անշուշտ յարգելի բանասէր հայագէտին ուշադրութենէն խուսած, քանի որ համարին է յատուկ և միակ ծանօթ ձևը, իսկ համարին մի միայն համարել, հաշուել իմաստով, ինչպէս յայտնի է դասական հեղինակներու գործածութենէն, և հետեւապէս հոս Եզնիկի քով ալ:

Կրկին անգրադառնալով Մարիէսի, պէտք է ըսենք որ Խա ի զուր Աճառեանը մեղսակից կը

1. Revue Կն էջ 66 (148). — 2. Առ. — 3. Առ. էջ 67 (149). — 4. Բագրատ. 1926, Արեւի էջ 112.

էջ տող.

ԳԻՐԿ ԶՈՐՐՈՐԻ

էջ տող.

| (յիք)                                                     | Եղծ աղանդոյն Մարկիոնի                                   | յիք                   |
|-----------------------------------------------------------|---------------------------------------------------------|-----------------------|
| 224 8 այլ աստուածս                                        | 245 8 այլ աստուածս                                      | առ աստուածս (յիք այլ) |
| 15 խորհեալ է բաց մերժէր                                   | 17 խորհեալ է բաց մերժէր                                 | (ճոյճ ընդ Վ.)         |
| 225 15 արկանէր ի գեհեան զամենն.                           | 246 24 արկանէր զայր ի գեհեան զա-<br>մենսին              | (ճոյճ ընդ Վ.)         |
| 227 18-9 իբրև հասն տէրն արարա-<br>ծոց թէ յաղթեցաւ ի նմանէ | 249 12-18 իբրև հասն տէրն արարա-<br>ծոց՝ թէ յաղթեցաւ նմա | (ճոյճ ընդ Վ.)         |

ՀԱՅ. ԿԻՐ.

Մանրամասնարար պատաս-  
խանի և եղծուհի Հերմուս.

|                                |                               |                     |
|--------------------------------|-------------------------------|---------------------|
| 230 7 մտաց բաղադանք են         | 251 19-20 մտաց բարբառանք են   | է մտաց բարբառանք են |
| 16 Քանգի                       | 252 6 Քանգի                   | յիք ջանգի           |
| 17 նմանապէս                    | 7 նմանապէս                    | յիք նմանապէս        |
| 238 28 առանձինն առելոյ         | 261 22 առանձինն առելոյ        | (ճոյճ ընդ Վ.)       |
| 239 23 սակայն էր ընկեր Պետրոսի | 263 3 սակայն էր ընկեր Պետրոսի | յիք սակայն էր       |
| 240 18 եղայ                    | 20 եղայ                       | եղա                 |

դնէ Գալեմքեար-Շմիտի՝ զի շնջման մէջ. և զարմանալին այն է որ Գալեմքեար-Շմիտն հերթելու համար մէջ կը բերէ Աճառեանի համտը:

Սիւալ հակակցողութեան պատճառ եղած է Աճ. Զ.ի «տողաժիլուովի դը» զոր Մարիէս զ կար- դացեր է, և ասկից «ի հարկ է սխալ արդիւնքի պիտի հասնէր»՝ ինչպէս կ'ըսէ ինքը Աճառեան:

241, 16. — «Զի յոթժամ զնորա մեծարոյ կարիսն գծծեսցուք»: Գալեմքեար ընդգծեալը կարծիս կը սրբագրէ, ինչպէս յայտնի է իր Թարգմանութեան մէջ, որուն կը հետեի Մարիէս ալ «Lire կարծիսն au lieu de կարիսն avec et comme Galemkhear»՝ անդիտանալով զուցէ՝ թէ անկէ առաջ Նորայր արդէն նոյն առաջարկն ըրած է, «Թուի ուղղելի մեծարոյ կարծիք»՝. մինչ անդին բոլորովին կը լռեն Աճ. և Հ. Գ. Վ. համապետեան:

Թէ բնագրական փաստ կը պահի այս սրբագրութեան համար, յայտնի է. քանի որ Աճ. Զ. — Գէորգ-Բգրտ — Զմ. ամէնքն ալ միահամուռ և անխտիր կարիսն կը դնեն. կը մնայ քննել թէ արդեօք իսկապէս անհրաժեշտ է այս սրբագրութիւնը:

Ըստ իս՝ ոչ. և կը համարիմ որ հնգնական ըլլայ եղնկի այդ խօսքը. և այս տեսակէտով դժուար չի թուի հաւանական իմաստ մը հանել անկէ: Ըստ այսմ այսպէս կը մեկնենք. «Երբոր անոր պատուաւոր կամ փառաւոր լարիքը կամ իւղճուրիւնը խայտառակենք», համտ. օր. «մե. ծապատիւ մուրացկաններ» հակասութիւն մը զոր հեղծութիւնը կը հաշտեցնէ: Այս ոճով մեր ա. ուշադիր նպատակները կ'իրականանան. առանց բնագրին աղաւաղելու՝ կ'ունենանք հաւանական մեկնութիւն մը:

Պէտք չէ մոռնալ սակայն որ Նորայրէն և Գալեմքեարէն առաջ կարիսն՝ կարծիս փոխելու նախափորձը Զմ. տիպը ըրած է արդէն, որուն «մեծարոյ կարծիսն»ը իր նախկին և զուտ «մե. ծարոյ կարիսն»ին վերագրածուցած է Գէորգ-Բգրտ. սրբագրութիւնը:

245, 8. — «Այլ աստուածս» ուղղելի՝ «առ աստուածս» — Բաբգէն Ա.<sup>4</sup> երկարօրէն կը ճգնի ապացուցանել թէ առ աստուածս պէտք է ըլլայ, ինչպէս ստուգել իմաստն ալ կը պահանջէ. սակայն այդ կը ցուցնէ թէ ինք իր առջև չէ ունեցած Աճառեանի քննական աշխատութիւնը. վասն զի համեմատութեանց շարքին մէջ Աճառեանի Զ.ը առ աստուածս ունի<sup>5</sup>. որով այլեւ կասկածի տեղիք չի մնար:

Միայն Աճառեանի դիտողութիւնը թէ. «Այն ուղղութիւնը նմանապէս պատահական տպա- գրական սխալ մը կը թուի»<sup>6</sup> բոլորովին ձրի է, որովհետեւ Զմ. երկու օրինակներն ալ այլ առ.

1. Louis Mariès, Le De Deo d'Eznik. գրախօսական. Բզմվդ. 1926, Ցուրն էջ 170-171. — 2. Re- vue Էն էջ 67 (ճանթ. 4). — 3. Հայգ. Բոքն. էջ 40. — 4. Հանդէս Ամ. 1907, էջ 315. — 5. Քնն. և Հմտ. էջ 60 և 82. — 6. Անդ էջ 82.

էջ տող.

ձևով ևս.

էջ տող.

|                                                                                                                                      |                                     |                       |       |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------|-----------------------|-------|
| Ընդ դէմ Մարկիոնայ որոք առասպելաբաններն թէ Յեսուս իբրև յօտար ոք ի սուրն Աստուծոյ եմուտ և ազատեաց զհօգիս տանջելոցն իբրաւամբ և իւրացոյց |                                     | (188)                 | (188) |
| 940 13 արժանի եղէ                                                                                                                    | 263 20 արժանի եղայ                  | արժանի եղա            |       |
| 242 15 որք մինչև ցայսօր պնդեալ են                                                                                                    | 265 20 որ ցայսօր պնդեալ են          | որ ցայսօր պնդեալ են   |       |
| 244 3 վարժս ոչ պահանջիցէ                                                                                                             | 267 17 վարժս ոչ առնու               | (ճոյճ ընդ Վ.)         |       |
| 8 ի տեսանէ իւրեանց, որ ոչ բարոյ                                                                                                      | 23 ի տեսանէ իւրեանց. որ ոչ ի տեսնէն | (= ի տեսնէն) իւրեանց. |       |
| 246 7 զիբորդ (ոչ իմացայք)                                                                                                            | 270 6 զիբորդ (ոչ իմացայք)           | որ ոչ բարոյ           |       |
| 20-21 որպէս և ինքն իսկ ի քաղիսնցոցն ստուգեաց հարցմամբ:                                                                               | 24 որպէս և ինքն իսկ ասաց            | (ճոյճ ընդ Վ.)         |       |
|                                                                                                                                      | ցփարիս(ինչին թէ ուղիղ զատեցար       |                       |       |

տուածս ունին առանց ո՛ր և է սրբազրութեան Գէորգ-Բգրտ. ըստ այնմ ալ Բագրատունեան տպ.ը կը ծնայ հմմտ. Զմիւռնեան օրինակին և ոչ վրիպական. նոյնպէս իրենց կարգին ստրկորէն հաւառարիմ կը ծնան Վենետեկեանին՝ Գարիգեան<sup>1</sup> և Կ. Պոլսեան<sup>2</sup> տիպերը:

245, 17. — «(Հիւղն) տեսանէր զի ոչ անսայր նմա Աղամ, այլ խորհեալ ի բաց մերժէր և չմերձենայր առ նա»:

«Խորհեալ»ը բնական է իմաստ մը չունի հոս. ըստ այսմ բանասէրներն ալ ջանացած են այնպիսի փոփոխութիւն մընել որ առանց ժանրապէս բնագրիւր վտանգելու՝ հաւանական ու մեր. ձաւոր նշանակութիւն մը տան՝ այս ձեռնարկին մէջ կը թուի Թոռնեան որ առաջինն է, և կ'ուզէ ուղղել «խորհեալ»:

Աճառեանն ալ, առանց ո՛ր և է յիշատակի Թոռնեանի մասին, իբր իր կողմէն աննախընթաց կ'ուզէ նոյնպէս «խորհեալ» պատճառաբանելով թէ «Հ և Ծ տառերուն շփոթութիւնը անցման երկաթագրին պատճառաւ է, ուր երկուքն ալ շատ նման են ձևով»<sup>3</sup>:

Կը խոստովանինք թէ սրամիտ և յաշող է Թոռնեանի այս սրբազրութիւնը. նոյնն Աճառեանին պիտի ըսենք՝ ի՞նչ առաջինին անկախ է:

Բարգէն Ս. իր կարգին խոտեալ ուղղել փորձած է, սակայն իր խօսքերէն յայտնի է որ կը նախընտրէ խորհեալը թէ՛ իմաստի և թէ՛ բնագրի տեսակէտով:

Հուսկ Մարիէ՝ հայտնօրէն անգէտ Թոռնեանի գործին՝ Աճառեանի քով կը տեսնէ զայն և կ'անուանէ «(correction) fort judicieuse»:

261, 19-22. — «Զի բանն ի յոյն լեզու յերկոսին հարկանէ: Եւ մանաւանդ զի առանց ար. թերն ասէ որ է՝ և. զի ոչ ասէ թէ մինչև ցերրորդ երկինն, այլ թէ ցերրորդ երկնի առանձինն ասելոյ»:

Մարիէս երկարօրէն կը քննէ խնդրական բացատրութիւնը. առանձինն ձևը իրեն համար étrange է և une fausse lecture. Դարձեալ իրեն համեմատ անիկա բոլորովին է mal compris par Schmid-Galemkhear (Bibliogr. n. 4, p. 185), որովհետև գերմանական թարգմանութեան մէջ անոնք գրեթէ անփոփոխ պահած են վերջին մասը՝ im Singular zu sagen = (Առանձինն ասելոյ). կ'անկարգէ Ֆէթթէրի կարծիքին ալ որ, սակայն, յօդի = ևի չուրջ կեդրոնացած է, թէ Եզնկի ցուցնել ուզած տարբերութիւնը չէր օծրածն ի և օծրածն ի միջև mais entre տրտու et տօ տրտու.

Վերջապէս իր առաջարկը կը դնէ առանց յիմ սրբազրութեամբ, համարելով որ ասով tout devient limpide: Իր հանած իմաստն այս է. «...Il ne dit pas jusqu'au troisième Ciel, mais jusqu'à une troisième (partie) d'un ciel sans dire dans lequel (Առաւ օր՝ տեսնա)»:

Ազնոյ յայտնապէս կը ցուցնէ Մարիէսի կարծիքին սխալը. և կը ցուցնէ թէ հոն խօսքը պարզապէս և յօդի մասին է. որով կ'ըսէ, առանձինն ձևն ըլլալու է առանց-ինն, այսինքն առանց և տարին<sup>4</sup>:

1. և 2. Էջ 226. — 3. Գրն. և հմմտ. էջ 95. — 4. Revue էջ 79 (160-161). — 5. Այն էջ 106, 107, (188-189). — 6. Բարգէն. 1926. Աղբիւ էջ 111.

էջ տող.

էջ տող.

ձևՌ ձԲ.

Իդժուճն առասպելաց Մար-  
կիոնի որ ասէ թէ՛ Աստուածն  
օրինաց տեսանելով զգեղեց-  
կութիւն աշխարհին Աստու-  
ծոյն օտարի, քակելոց է զհիւր  
աշխարհն խաբանելով զտէ-  
րութիւնն իւր

(188)

249 5 Ուսարուր յառաքելոյն

(188 ուսարուր)

(6036 266 Վ.)

ձևՌ ձԴ.

Իդժուճն առասպելացն Մար-  
կիոնի որ ասէ թէ՛ Աստուածն  
օրինաց տեսանելով զգեղեց-  
կութիւն աշխարհին Աստու-  
ծոյն օտարի, քակելոց է զհիւր  
աշխարհն խաբանելով զտէ-  
րութիւնն իւր

(188)

(188)

Յայտնի է որ այս է հաւանական կարծիքը, համեմատ բնագրին որով բոլորովին կամայական կը ծնայ Մարիէսի առաջարկը. թողունք որ ինքիր մէջ ալ ըստ իս, սխալ կը թուի. վասն զի իր մեկնութեան մէջ յիշի տեղ գէթ յոր կամ յորում պէտք էր ըլլալ, որովհետեւ յարաբերական դերանունի հարկը կայ հոն «ասանց ըսկոյն քի ո՛րում մէջ = *dans lequel* և ոչ թէ յիւմ = *l'au* բառի մէջ = *dans quoi*»:

Դման վրիպակ մ'ալ է 22, 3-4 երկնայ<sup>1</sup>, փոխանակ երկուցնայի՝ որ անշուշտ յարգելի հեղինաւ կին ուշադրութեանէն վրիպած է, ինչպէս բնական է անոր որուն ընտանի և մայրնի բարբառ չէ հայերէնը:

263, 20. — «Արծանի եղայ»: Հետաքրքրական է եղանիմ բայի այս ձևը, քանի որ հնագոյն հեղինակի մը քով, հնագոյն նշմար մը կը ցուցնէ աշխարհաբարին: Կարելի չէ ըսել թէ սխալաւ գրութիւն է, քանի որ ՈՏ. 2. — Գէորգ-Բգրտ — և Զմ. անխտիր այդ ձևն ունին: ՈՏառեան «Տաւ բակոյսի մէջ ենք, կ'ըսէ, թէ արդեօք այս բառն ալ հնութեան հազուագիւտ ծագողը մըն է<sup>2</sup>»:

Կը համարիմ որ դիւրաւ կարելի է փարատել այդ տարակոյրը խորհելով որ այդ ձևը անկաւ նոտութիւն կամ տարօրինակութիւն մը չէ, այլ պարզապէս ուղիղ ձև խոնարհման կրաւորակերպ յաւելուածոյ բայի մը, ինչպէս օր. զեղանիմ-զեղայ-ար-աւ. շեռանիմ-շեռայ-ար-աւ, հուսանիմ-ուսայ-ար-աւ ևն. որով և եղանիմ-եղայ-ար-աւ. և թէ սովորական ձևն է եղէ(եայ)-եղեր(եար) — եղեւ (եաւ), յոգնակիի մէջ անխտիր են եղեաք և եղաք, մանաւանդ թէ յետինը աւելի գործաւ ծուած. զարմանալի չէ ուրեմն որ եզակիին մէջ ալ անխտիր ըլլան եղեայ (է) և եղայ:

267, 6. — «Խաշիուլեամբ գնեաց զՄարկիոնն»: — Մարիէս զՄարկիոնն՝ կ'ուզէ ուղղել զմարդիկն՝ առարկելով թէ «on ne voit guère ce que la personne de Marcion vient faire ici», Աղոնց «կասկածելի» կը համարի այդ սրբագրութիւնը և օրամտութեամբ կ'ըսէ թէ «Պարզ հեզ-նութիւն է Մարկիոնի հասցէին<sup>3</sup>», ըստ իս ոչ միայն կասկածելի այլ և յանդուգն է Մարիէսի քայլը. թէ ստուգիւ հեզնութիւն է, ըստ Աղոնցի, կարելի է հետեցնել ամբողջ գրքէն, որ եղեկ կարգաւ մէջ բերելով Մարկիոնեաններու վարդապետութիւնները «ասեն» ներքով՝ 266-267 կ'ուզէ ցուցնել որ իրեն այս ամէն ըսածներուն համեմատ Մարկիոն անգամ, որ գլուխ է իբր նորօրինակ փրկութեանը, չէ գնուած խաշիութեամբ:

268, 7. — «Արդ եթէ յիսրայէլացւոց կերպարանս եկն ի տուն նորա, սակայն պարտաւ. բեւոց էր»: Սակայնի պաշտօնին մթութեան պատճառաւ Մարիէս<sup>4</sup> կ'ուզէ սակայն կարգալ՝ նշաւ նախութեամբ ըստ այսմ, այս ոճով, այս տեսակեալով — à ce titre (dans ces conditions). Բայց ներքէ յարգելի հեղինակը որ, հոս ալ կը սխալի բոլորովին, վասն զի սակ երբեք պատճառական իմաստ չունի հայերէնի մէջ. որով գէթ սակաւ առաջարկէր. թողունք որ այս պարագային պիտի

1. Revue ևս էջ 84 (166). — 2. Քնն. և հմտ. էջ 95. — 3. Բեյզով. 1926. Ապրիլ էջ 111. — 4. Revue ևս էջ 108 (190).

|                                  |                            |               |
|----------------------------------|----------------------------|---------------|
| էջ տող.                          | էջ տող.                    |               |
| 250 11 պահեալ ընդէ՞ր չիցէր զգաւ. | 274 9 պահեալ իցիւ զգալուստ | (նոյճ ընդ վ.) |
| 22 Քաղաքի իւրաքանչիւրն զիւրն     | 23—4 և իւրն զիւրն ընդունի  | (նոյճ ընդ վ.) |

ՀԱՅԻ ՀԴ.

Ընդ զէմ Մարկիոնի որ բարբառնէր թէ՛ ալ էր Յիսուս յԱստուծոյն օրինաց. և նոյրին օրէնքն հակառակ է օրինացն Աստուծոյ. և թէ՛ զմուկն պարտ է ուսել. և զմիւս և զամուսնութիւն իբրև զպիղծ համարել:

(շէք)

(շէք)

258—54 Քշնամուոյն... սիրեցես զընկեր... քումէ սիրեցես զընկեր... պատուիրեաց մովէս

277

Քշնամուոյն... սիրեցես զընկեր... քումէ սիրեցես զընկեր... պատուիրեաց Մովսէս

Քշնամու... սիրեցես զընկեր... քումէ սիրեցես զընկեր... պատուիրեաց մովէս

28 ոչ սուտ

278 28 ոչ սուտ

ոչ = (= ոչ սուտ)

ստիպուի այնն ալ փոխել, զի սակս՝ սեռ. կ'ուզէ իրմէ վերջէ՛ հոյն սխալն<sup>1</sup> բրած է 132, 8 «Ձի որդի (ծնցի) սակայն եղև նմա»: Հոս ալ Մարիէս սակ այն կ'ուզէ = dans ces conditions, որքանալ շփոթելով սակը սակսի հետ. ուր նոյնպէս, ինչպէս վերն ըսինք, այնը սեռական բլլալու էր:

280, 5-8. — «Եթէ պիղծ ինչ էին կերակուրքն, նախ ինքն իսկ (Քրիստոս) ոչ ճաշակէր ի նոցանէ, և ապա այլոց հրաման տայր ձաշակել»:

Յեմ գիտեր ինչպէս վրիպեր է բանասէրներուն աչքէն այս յայտնի սխալը որ խօսքին իմաստը կը քայքայէ. տարակոյս չկայ թէ պէտք է ձաշակել ուղղել, ինչպէս որ Աճ. 2. ալ ունի:

287, 22. — «Կուսութիւնն չէր յանգարի կուսութեան»: Զմ. տպ.ը յանգարին ըստ կարգի կը փոխէ, յայտնի է թարգմանելով իմաստը այդ բառին որուն մասին յատկապէս զրած ենք ուրիշ անգամ<sup>2</sup>:

288, 25. — «Թողէ այր գնայր և զմայր իւր»: Աճ. 2. ի մէջ կը պակսի հայրը ինչ որ յայտնապէս կը պահանջուի հոս, և մինչ մէկ կողմէն այդ ձեռագրին թերին կը մատնանշուի, միւս կողմէն նոր փաստ մը կ'աւելնայ ոչ-նոյնութեանը Գէորգեանի հետ, քանի որ վերջինս զայն ունի ինչպէս և Զմ. տպ.ը:

Մարիէս ալ կը խոստովանի «հայր»ի հարկը, աւելցնելով թէ «C'est évidemment une petite omission due à l'homoioteleuton des deux mots: այր հայր». Depuis longtemps et à juste titre, les éditeurs, Smyrne et Venise, ont restitué ce mot».

291, 11-12. — «Եւ թէ վասն զի ի հիւղեայն է մարմին՝ չառնիցի արժանի արքայութեան»: Աճ. 2. չառնի արժանի, ինչպէս կը տեսնուի համեմատական սիւնակին մէջ. Զմ. օրինակին մէջ ալ կը պակսի այն, ուր սովայն խնամքով սրբազրուած աւելցուած է արժանի՝ անշուշտ Գէորգեանի սրբազրութեամբ. այս ալ ի նպաստ Գէորգեանի օրինակին և անոր ոչ նոյնութեան՝ Աճ. 2. ի հետ:

Աւելորդ է ըսել թէ արժանին վաւերական է, վասն զի առանց անոր կարելի չէ իմաստ մը հանել այդ խօսքէն:

296, 18-25. — «Մարկիոնն այս ի Պոնտացւոց աշխարհէ անտի եղեալ էր, որդի եպիսկոպոսի: Եւ ապականեալ զգոյս մի, զնաց փախստական վասն մերժելոյ զնա յիկիղեցւոյ՝ իւրոյ իսկ հօրն: Եւ երթեալ ի Հռոմ խնդրել ապաշխարութիւն յայնմ ժամանակի, և չհասեալ այնմ՝ զորդեացաւ ընդդէմ հաւատոց»:

Հոս կը յիշեմ Զամչեանի պատմածը՝ Դաւիթ Բեկի մարտակից՝ Տէր Աւետիք քահանայի մաւսին որ «Գնացեալ յարեմուտս՝ էառ զներուսն ի Ժայրազոյն Քահանայապետէն Հռովմայ՝ վասն

1. Revue հն. էջ 99 (181): — 2. «Հայագիտական հասկացաղ». Բզմվպ. 1927, Յունուար էջ 20-21.

էջ տող.

255 12 Արքի՝ յետուայ շնորհքն զգափ  
 յետուանայնն օրինացն ու-  
 նի՝ զի զնորա ասարեալան  
 հաստատէ յաւետարանին.

էջ տող.

279 12 Իւ զարեհալ՝ շարականաւոյն  
 և չցանկանալոյն զոր ու-  
 սայցն Յետու, այնչափ առ  
 աստուածս ունի զօրինացն  
 աստուած զի զնորա ասա-  
 ցեալն հաստատէ յաւետա-  
 րանի

աստուցին, (Հոս Աճառեան կը գրէ) Սկը-  
 սեալ էջ 279, տող 18 «Եւտու, այն-  
 չափ առ աստուածս ունի» միմեծ էջ  
 281, տող 1-2 «քանզի Քրիստոս  
 զամենայն կերակուրս ուսէր աւ-  
 խտիք, որպէս յայտ է յաւետարանին,  
 իսկ թէ ստիցեն՝ թէ Քրիստոս յետ  
 յարութեանն եկեր զմեզն և ոչ զմիւս,  
 վասն այսորիկ և մեց զմեզն ուսեմք  
 և ոչ զմիւս, ասելի է թէ» լիք

256 3-4 Ինքն Քրիստոս ոչ ճաշակէր  
 ի նոցանէ՝ և ապա այլոց  
 հրաման տայր ճաշակել.

258 23 զլախորժականն մտաց

260 14 զԲեթն զեղծէ զժողովոյն

280 6-8 Ինքն իսկ ոչ ճաշակէր ի  
 նոցանէ, և ապա այլոց հրա-  
 ման տայր ճաշակել

283 14 զլախորժականն մտաց

285 10-11 զԲեթն զեղծէ զժողովոյն

չճաշակել  
 զլախորժականն մտաց (= զլախոր-  
 ժականն մտաց)  
 ... զԲեթնին

ԱՌԻ ԼԵՍ.

Կրօնաւորաց միս չուտելն վասն  
 մոլեղաւորեանն և ոչ վասն  
 անտուր համարելոյ է.

(յիք)

(յիք)

մղելոյ նորա այնչափ պատերազմունս ի քահանայութեան իւրում. ըստ որում սովորութիւն էր  
 ազգին՝ յաղպիսի մեծամեծ իրս գիմել ի Գահն Հռովմայ՝: Բայց ինչ որ Չամչեան սահմանա-  
 փակելին ազգին կ'ըսէ, Եզնիկի վկայութեամբ ընդհանուր եկեղեցւոյ կը հասկցուի. Բաֆֆի ծիծա-  
 ղելի կը համարի. «որ հայր Չամիչը, որը սիրում է իր պատմութեան մէջ շատ հայկական  
 երևոյթներ կաթողիկոսեան ստուերի մէջ ծրարել, այդ մոլեռանդ Միթթարեանը խիստ ոգևորու-  
 թեամբ խօսելով Տէր Աւետիքի վերջին վարմունքի մասին նրան փոխանակ Երուսաղէմ՝ Հոսմ է  
 ուղարկում Պապից թողութիւն խնդրելու իր մեղքերի համար»:

Հոս Բաֆֆիի պէտք է ինք հարցնել թէ Մարկիոն ինչու՞ Հոսմ կ'երթայ և ոչ Երուսաղէմ. և  
 Եզնիկ ինչու՞ նրան փոխանակ Երուսաղէմ՝ Հոսմ է ուղարկում Պապից թողութիւն խնդրելու իր  
 մեղքերի համար... Ե. դարու Եզնիկն ալ մոլեռանդ է Չամիչի պէս...:

Յայտնի է թէ Բաֆֆի է որ յակամայս իր մոլեռանդութիւնը կը ցուցնէ, անշուշտ միամիտ  
 բարեմտութեամբ. որովհետեւ Եզնիկ ու Չամչեան դուրս չեն կրնար վէպեր չինել, ինչպէս ինքը,  
 մանաւանդ այսպիսի ծանրակշիւ նիւթերու շուրջ: Եթէ Բաֆֆի Պատմութիւնն և աւանդութիւնը  
 քիչ մ'աւելի պրպտած ըլլար ուրիշ կերպով պիտի արտայայտուէր, կամ զէթ լուր. որովհետեւ  
 եթէ վայրկեան մը Չամչեանի ճշմարտախօսութեան վրան իսկ տարակուսիք, ուրիշ պատմական  
 վկայութիւններ չեն պակսեր իբրեւ ապացոյց այդ աւանդութեան, կամ ինչպէս Չամչեան ըսաւ,  
 ազգին սովորութեան. ահա զէպք մը որ կը պատմէ Պանդալէոն քահանայ Ժ. դարուն (965): «Քա-  
 հանայ ոմն էր արժանաւոր... (Ի) Գործովիտ, ի զեղն Բզրայրի գում... և ի զեղն բնակեալ էր  
 այր մի պատուական ի տանուիրական տանէ. և խաբեալ զնա սատանայ... անդեղէն և անդառ-  
 նալի խորհրդով արհամարհէր զքահանայն Աստուծոյ... Չայրացեալ սրբոյ քահանային նզովիաց  
 զնա դառնապէս և ըստ աստուածատուր իշխանութեան զոր ունէր ի ձեռին իւրում՝ զկապելն և  
 զարձակելն ի յերկինս և յերկրի, կապեաց զնա բանիւ և զօրութեամբ Աստուծոյ՝ յանլուանելի  
 կապանս... ապա եհաս վախճան քահանային... և նա (նզովուած մարդը) Միաց անդեղէն...

Ապա ուրեք եկեալ ի միտս իւր... սկսաւ... կոծել զդուրծս իւր լալով և ողբալով... և հար-  
 ցանէր ցգիտունս գրոց և ցմուտս օրինացն Աստուծոյ թէ արդեօք իցէ՞ դեղ՝ անբժշկելի ցաւոյս...  
 Պատասխանի ետուն... Թէ, Չիք քեզ հնար... արձակել յանիգելի կապանացդ, բայց միայն թէ ու-  
 դեորիս... ի գլուխն տիեզերաց ի մեծն Հոսմ ուր են Ս. Առաքեալքն Պօղոս և Պետրոս... Չայս լուեալ  
 նորա՝ շերմեռանդն սրտիւ... յուղի անկեալ... եհաս... ի մեծն Հոսմ... անկեալ առաջի պատրիար-  
 քին զոր Պապիսան կոչեն և պատմեաց զամենայն անցս աղետից իւրոց նա և զպատճառս զալոյն»:

1. Պատմ. Հայոց. հատ Գ. Գրքեր Զ. ԳԵ. ԽԹ. էջ 800. — 2. Դատիթ ԲԷԷ. ապ. Թիֆլիս 1890, էջ 762-3. —  
 3. Հայապատմ. հատ. Բ. էջ. 122-132.





| էջ տող.                        | էջ տող.                    | էջ տող.       |
|--------------------------------|----------------------------|---------------|
| 270 18 անձն՝ զիւր              | 296 12 զանցնիւր            | զանցնիւր      |
| 21 Երթեալ է Հոսմ խնդրել զաւ.   | 23-24 Երթեալ է Հոսմ խնդրել | (Եոթն ընդ վ.) |
| պաշխարութիւն                   | պաշխարութիւն               |               |
| 271 21 մասն մի կտրիցէ... զամե. | 298 1-2 մասն մի կտրիցէ     |               |
| նայն                           |                            |               |
| 21 մարմնոյն իսկ վկայէ          | 2-3 մարմնոյն իսկ վկայէ     |               |

Հոս կ'աւարտի «Եզն աղանդոց»ը և Աճ. Զ. Պարզ Հետաքրքրութեան համար կը դնենք «Խրատք»ին համա-  
մատութիւն Զմ. և Գէորգ-Բգրտ. սրբազրութիւնը.

## ԶՄ.

## ԳԵՌԳ-ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՆՈՐԻՆ ԵԶՆԱԿԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎՈՂԴԱՅԻՈՅ ԽՐԱՏԻ

ՆՈՅՆ ԵԶՆԱԿԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏԻ

ՈԳԷՇԱԼԻ ԵՒ ՊԵՏԱՆԻՔ

| էջ տող.                             | էջ տող.                               |
|-------------------------------------|---------------------------------------|
| 273 3 Աստուած ասէրն իւրում կամացն   | 299 4 իւր կամացն                      |
| 6 աղօթել                            | 8 աղօթս մատուցանել                    |
| (պակաս է «Մզեա զմարմինդ... ելանես») | 299 11-300,4 Մզեա զմարմինդ... ելանես. |
| 9 յաւելցիս յանանց բարութիւնսն       | 300 7 վայելեսցես յանանց բարութիւնսն   |

Նոյն ոճով անհամաձայնութիւն մը կայ մատենի և մասննի միջև. անպայման պէտք է նշանակենք. վասն զի եթէ վերը մատն է, վարը մասն չի կրնար դառնալ՝ ըլլալով հետեանք վե-  
րինին. և որովհետեւ վարը կարելի չէ ըսել «սակաւ ինչ մասն», անոր համար պէտք է վերն ալ  
մասն ուղղել, և այն ատեն խօսքը իր բնական և սահուն իմաստը կու տայ. հոս ալ բնագիրը չի  
փաստարկ կարծեմ Ս և Տ տառերու փոփոխութեամբ:

Հ. Գ. Վ. Նահապետեան ալ մասն կը սրբագրէ<sup>1</sup>, իբրեւ հաստատութիւն մասնին կրնանք  
աւելցնել որ ան կը համապատասխանէ զուգընթացօրէն նախորդ խօսքին. և ինչպէս հոն խօսք  
կ'ըլլայ կրնա ընտրելու, կէտք նետելու, հոս ալ բնական է որ մաս, մաս ըլլայ:

Կը ֆայ վկայէ զոր Հ. Գ. Վ. Նահապետեան վնասէ<sup>2</sup> կ'ուղղէ պարզապէս, առանց ո՛ր և է  
ապացոյցի սրբագրելով բնագիրը, որ Աճ. Զ. — Գէորգ-Բգրտ. — Զմ.ի քով անխտիր կերպով  
վկայէ է Նոյնպէս ըրած է կանխաւ Գաւեմքեար ալ<sup>3</sup>:

Հնդկադատակն Մարիտ լռելեայն կ'ընդունի, քանի որ նոյն խօսքը կը քննէ ու կը թարգ-  
մանէ (témoigne) առանց փոփոխելու. Նորայր ալ չէ դպած անոր:

Հստ իս ամենին հարկ չկայ այդ փոփոխութեան, և բնագրական փաստի չդուրսթիւնն ալ  
նոյնը կը թելագրէ:

Կը համարիմ որ այսպէս կարելի է մեկնել. Եզնիկ նախապէս կ'ըսէ Մարկիոնի համար թէ  
իր անկարգութեան պատճառաւ իր հօր ձեռքով իսկ եկեղեցին տարագրուած՝ ի Հոսմ իսկ «ապաշ-  
խարութեան ևս հասանել ոչ եղև արժանի... զի ի պատգամս Հոգւոյն սրբոյ իշխեաց ձեռն ար-  
կանել, զկէսն հատանել, ընկենու իբրև զխոտան, և զկէսն ընտրել առնուլ իբրև զպիտոյս: Եւ  
զայն ոչ գիտէ թէ յորժամ ի մարմնոյ մասն<sup>4</sup> կտրիցէ առնուցու, զամենայն մարմնոյն իսկ վկայէ՝  
սակաւ ինչ մասնն կտրեալ». այսինքն Մարկիոնի ըրածն յիմաստութիւն է. ք՛հ որ կտրուած մասը  
կը ցուցնէ ֆնացած մասերուն բնութիւնը. եթէ կտրուած մասը, անպէտ ու ֆնասակար է, ըսել է  
ֆնացածն ալ անպէտ ու ֆնասակար է քանի որ նոյն հեղինակէն է, նոյն աղբիւրէն, որ միևնոյն  
միջոց քաղցր և դառն չի կրնար բերել, և այս ճիշդ համեմատ է Եզնիկի մէջ չեղտուած միւս ճշը-  
մարտութեան և գերազոյն սկզբունքին թէ մէկ է Աստուած և անկէ երկու տեսակ արարած չէ  
ստեղծուած՝ բարի և չար: Ուստի վկայէն շատ գեղեցիկ կը պատշաճի:

Հոս կ'աւարտենք մեր համեմատութիւնն հասնի. նպատակ՝ զոր յօդուածիս սկիզբէն  
ներն և զիտողութիւնները Եզնիկի «Եզն աղանդոց»ի շուրջ. Կը համարինք որ այս  
փոքր աշխատութիւնը իր նպատակին կը պարզած ենք և պատշաճ կը համարինք  
հոս եզրակացնելով կրկնել թէ ան էր.  
Ա. — Յուցնել թէ Գէորգ Տէր Յով-

1. Ուրդ. ազգ. մոտց. էջ 289. — 2. Անդ. — 3. Հանգէս Ամս. — 4. Հստ նոր սրբազրութեան Բարեգն Ս.ի ևն.

էջ տող  
11 զմարմին զարմանէ  
(պսկաս է «Զոր ինչ Աստուած... փառաւորես-  
ցիս»)  
(պսկաս է «Արտասուս... ընդ անհաւատան  
դասն»)  
(պսկաս է «Զէ պարտ կրօնաւորի... զթինս  
իմից»)  
274 18 և զպաշտօնութիւն կրօնաւորի ընտանութիւն  
մանկանց  
(պսկաս է «Իթէ զերկինս... մի հաւատար»)  
(պսկաս է «Մի սիրեր զյազուրդ... սատանայի»)  
(պսկաս է «Մի սիրեր զեզրայն... զպատիժն»)  
275 (պսկաս է «Զվէրն... ոչ լինի»)  
(պսկաս է «Յորժամ աղօթեմ... չաղօթեմ»)  
18 Երկկոյնի  
28 չէ ցանկացող Քրիստոսի  
276 13 ստանալ  
(պսկաս է «Նաշանջեա... չարիք են»)  
17 զիտութեամբ  
21 փառաւոր կերակուր  
277 7 Ի մարմնոյ դիւր  
(պսկաս է «Եթէ առնեն քեզ... հանդիպի նմա»)  
(պսկաս է «Որ է պէտք... խորհրդոյ»)  
(պսկաս է «Քրիստոս ասաց... Աստուծոյ է»)  
277-8 (Աղղորձ մեղու լաւ է) քան զծիր կարիճ  
(պսկաս է «Եւ ճթէ թերի ետ... անօգուտ է»)

էջ տող  
12 զմարմին պարտէ  
18-21 Զոր ինչ Աստուած... փառաւորեսցիս  
300 26-301 14 Արտասուս... ընդ անհաւատան դասեւ  
302 10-13 Զէ պարտ... իմից  
15-16 և զպաշտօնս կրօնաւորի ընտելութիւն ման-  
կանց  
17-19 Եթէ զերկինս... մի հաւատար  
303 1-4 Մի սիրեր... սատանայի  
8-12 Մի սիրեր... զպատիժն  
22-25 Զվէրն... ոչ լինի  
304 5-8 Յորժամ... չաղօթեմ  
305 4 Երկկոյնի  
12-13 չէ ցանկացող սեղանոյն Քրիստոսի  
306 8 ժառանգել  
12-22 Նաշանջեա... չարիք են  
25-26 զիտութեամբ զբոց վկայութեամբ  
307 15 փափակ կերակուր  
308 2-3 Ի պէտս մարմնոյ  
9-309 10 Եթէ... նմա  
309 18-22 Որ է պէտք... խորհրդոյ  
310 5-24 Քրիստոս... Աստուծոյ է  
26 ... քան զծիր պիծակ  
311-318 Եւ ճթէ թերի... անօգուտ է

# ԿԱՏԱՐԵՑԱՆ ԽՐԱՏՔՆ

հաննէսեանի Զեռագիրը՝ որ իբր աղբիւր  
ծառայած է վենետիկեան—թղթո. տպագրու-  
թեան զմիւռնեանը սրբագրելով՝ բոլորո-  
վին տարբեր է Աճառեանի նորագիւտ ձե-  
ռագրէն, մանաւանդ թէ ընտրելագոյն օրի-  
նակ թէ՛ ընագրի ամբողջութեան և թէ  
ուղղագրութեան տեսակէտով և այս ընդ-  
դէմ Աճառեանի, Մարիէսի ևն։

Բ. — Յուցնել թէ Բագրատունի հա-  
ւատարմութեամբ և խղճմտութեամբ կա-  
տարած է վենետիկեան 1826ի տպագրու-  
թիւնը համեմատ Գէորգ Տէր Յովհաննէս-  
եանի Զեռագրին սրբագրութեանց՝ Զմիւռ-  
նեան տպ. կրկին օրինակներուն վրայ-  
այս ալ յատկապէս ընդդէմ Աճառեանի,  
Մարիէսի, Գալեմքեարի։

Գ. — Յուցնել Զմ. տպագրին աղճատ,  
սխալագիր, և ամէն տեսակէտով թերի և  
տգիտական վիճակը, հակառակ Աճառեա-  
նի, Մարիէսի, Վարդանեանի ևն։

Դ. — Դիւրութիւն ընծայել քանասէր-  
ներուն Եզնկի նորագոյն ուսումնասիրու-  
թեանց։

Ե. — Հուսկ աստղծը պատրաստել  
Եզնկի լաւագոյն և ուղղագոյն տպագրու-  
թեան մը։

Ուրախ պիտի ըլլանք լսելու յարգելի  
բանասէրներէն ո՛ր և է կարծիք կամ դիտո-  
ղութիւն յատկապէս մեր այս հինգ տե-  
սակէտներուն շուրջ՝ ամբողջ յօդուածիս  
մէջ։

Հ. ԵՂԻՍ ՓԵՅԻՍԵԱՆ